ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 դեկտեմբերի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

174
(3205)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՐՔԱՆ ՀԱՐԿ Է ՎՃԱՐԵԼ ԵԿԵՂԵՑԻՆ 2025Թ.-Ի 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ

Եկեղեցու դեմ ուղղված իշխանական բոյկոտն ըստ ամենայնի բազմիցս ապացուցվել է, որ սկսվել է դեռ վաղուց՝ 1-2 տարի առաջ, սակայն զարգացում ունեցել է վերջին ամիսներին:

Այս «արշավանքի» շրջանակում, օրինակ նախորդ տարի՝ մայիսին, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը խորհրդարանի ամբիոնից հայտարարեց՝ «Եկել է ժամանակը, որ քննարկենք ու հասկանանք, թե այն հարկային պարտավորությունները, որ բոլորի համար առկա են, եկեղեցու հանդեպ ինչու չի կիրառվում»: Ես ուզում եմ հասկանալ՝ ինչու իրենք պիտի հարկ չվճարեն, ու օրենսդրական առումով պետք է վերանայենք, թե եկեղեցականը, ում թաթիկը համբուրում են, ինչո՞վ է բարձր գործարարից, ով հարկ է վճարում»,- ասել էր Սիմոնյանը՝ եկեղեցու հոգեւորականներին համեմատելով գործարարների հետ:

Ասել է թե՝ փորձում էին եկեղեցուն էլ ներքաշել հպարտ հարկատուների ցանկում՝ չիմանալով, որ Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին որպես կրոնական կազմակերպություն ոչ միայն խոշոր հարկատու է, այլ նաեւ ներառված է 1000 խոշոր հարկատուների ցանկում:

«Ժողովուրդ» օրաթերթը Պետական եկամուտների կոմիտեի հրապարակումներից տեղեկանում է, որ «Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցին» 2025 թվականի երրորդ եռամսյակում 1000 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցրել է 508-րդ հորիզոնականը՝ վճարելով 524 մլն դրամ հարկ:

Իսկ, ահա, նախորդած չորս տարիներին եկեղեցու վճարած հարկերը կազմել են.

- 2020 թվականին 378 մլն դրամ,
- 2021 թվականին 403 մլն դրամ,
- 2022 թվականին 450 մլն դրամ,
- 2023 թվականին 435 մլն դրամ:

Արձանագրենք, որ եկեղեցու վճարած հարկերն ամեն տարի ավելանում են, ոչ թե նվազում: Սակայն, սրան զուգահեռ, ավելանում են ճնշումները եկեղեցու եւ եկեղեցականների դեմ, ինչպես նաեւ պետական պարտքը:

Մայր Աթոռի կողմից կարգալույծ հռչակված Արամայիս Թախմազյանը՝ նախկին Տեր Թադեւ քահանան, շարունակում է Ներքին Բազմաբերդի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցում պատարագներ մատուցել եւ եկեղեցական այլ ծիսակատարություններ իրականացնել: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց հենց ինքը՝ Թախմազյանը: «Այս կիրակի Բազմաբերդի եկեղեցում, որտեղ ես մինչ այս էլ հոգեւոր ծառայություն էի իրականացնում, պատրաստվում եմ կիրակնօրյա պատարագ մատուցել: Անցած կիրակի էլ եմ ես մատուցել եւ ասեմ, որ հիմա մարդիկ ավելի շատ են գալիս իմ պատարագներին»,- ասաց Թախմազյանը: Նրա՝ կարգալույծ հռչակվելուց անմիջապես հետո ArmLur.am-ը զրուցել էր Թախմազյանի հետ: Վերջինս նշել էր, որ իր համար անսպասելի էր Մայր Աթոռի որոշումը: Մեր այն հարցին՝ պատրաստվո՞ւմ է կարգալույծի կարգավիճակով խորան բարձրանալ, ինչպես արեց Հովհաննավանքի նախկին քահանա Ստեփան Ասատրյանը, Թախմազյանը խուսափեց պատասխանելուց՝ ասելով, որ առայժմ չգիտի՝ ինչ է անելու: Թե ում կողմից է աջակցություն կամ խորհուրդ ստացել շարունակելու «պատարագ» մատուցել, ինչպես Ստեփան Ասատրյանը, առայժմ չենք կարող ասել: Հիշեցնենք, որ դեկտեմբերի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Թալինի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Թադեւ քահանա Թախմազյանը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը նախորդ տարի ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից (USAID) մեծ գումարներ է ստացել: Իսկ ի՞նչ է հայտարարագրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում պաշտոնյաների հայտարարագրերն ու բարեվարքությունն ուսումնասիրող կառույցի ղեկավարը՝ ինքը Մարիամ Գալստյանը: Ժամանակավոր պաշտոնակատար Մարիամ Գալստյանի 2024 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ վերջինս 1995 թվականից բաժնային մասով բնակարան ունի Երեւանում: Տրանսպորտային միջոցներ Գալստյանը չի հայտարարագրել: Մ. Գալստյանը, կարծես թե, գաղտնի միլիոնատեր է. նա հայտարարագրել է 15 մլն բանկային ավանդներ: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 7 մլն 969 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 75 եվրո, 1, 220 ԱՄՆ դոլար: Մարիամ Գալստյանի տարեկան եկամուտները կազմել են 41 մլն 605 հազար դրամ, որից 16 մլն 826 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից, 18 մլն 269 հազար դրամը վարկ է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ից, 31 հազար 500 դրամն էլ՝ ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոնից» ստացված Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություն են փոխանցել այն մասին, որ «Հայաքվե» հասարակական-քաղաքացիական միավորումը ակտիվորեն պատրաստվում է 2026 թվականի համապետական ընտրություններին: Մեր աղբյուրները հայտնում են նաեւ, որ «Հայաքվե»-ն պատրաստվում է միավորվել նոր ձեւավորված «Միասնության թեւեր» շարժման հիմնադիր ու առաջնորդ Արման Թաթոյանին: ««Հայաքվե»-ն ինչ-որ մեկի հետ չի միավորվում, եւ ես չգիտեմ, թե ինչ տեղեկություններ են: Մենք հայտարարել ենք, որ պատրաստ ենք արտախորհրդարանական ընդդիմության դաշտում արդյունավետ համախմբման գնալ, նախընտրական դաշինք ձեւավորել, ինչի շրջանակներում տարբեր ուժերի հետ, որոնց մենք դիտարկում ենք, կոնտակտներ եղել են, կան»,- ասաց «Հայաքվե»-ի անդամ Մենուա Սողոմոնյանը: Նա նաեւ հայտնեց, որ երբ միավորման դաշինք ստեղծելու գաղափարը պարզ կլինի արդեն, ապա հանդես կգան հայտարարությամբ եւ կտեղեկացնեն հանրությանը: Հարցին՝ ո՞ր ուժերի հետ են պարբերաբար հանդիպումներ ունենում, ի՞նչ հարցերի շուրջ են համաձայնության գալիս, եւ ունե՞ն արդյոք միասնական թեկնածու, թե ոչ՝ Սողոմոնյանը նշեց, թե առայժմ վաղ է խոսել այդ մասին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

«ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ Է

ԲԱՔՎՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ Է ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՖԱՐՍԸ

Բաքվում շարունակվում է ապօրինաբար պահվող հայ գերիների դեմ դատական ֆարսը: Երեկ «դատավարության» եզրափակիչ փուլի մի մասն էր:

Միայն տեքստում, որը ներկայացնում են ադրբեջանական ՋԼՄ-ները, չկան նրանց ելույթները. այնտեղ միայն փաստաբանների խոսքերն են, որոնք ձեւականորեն խնդրել են արդարացում:

Այնուհետեւ ապօրինաբար պահվող հայ գերիներից մի քանիսը՝ Դավիթ Մանուկյանը, Լեւոն Բալայանը, Մադաթ Բաբայանը, Գարիկ Մարտիրոսյանը, Մելիքսեթ Փաշայանը, Դավիթ Ալավերդյանը, Գուրգեն Ստեփանյանը, Էրիկ Ղազարյանը եւ Վասիլի Բեգլարյանը հանդես եկան վերջին խոսքով՝ հայտարարելով, որ որեւէ հանցագործություն չեն կատարել: «Նիստը» ընդմիջվեց, այն կշարունակվի դեկտեմբերի 19-ին:

Հիշեցնենք, որ օրերս «Ժողովուրդ» օրաթերթը այս համատեքստում զրուցել էր «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի» ղեկավար, ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ, իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանի հետ: Նա հայտնել էր, որ այս տարվա սեպտեմբերից Կարմիր խաչը այլեւս ներկայություն չունի Ադրբեջանում: Մասնավորապես տիկին Սահակյանին հարցեր ուղղեցինք գերիների առողջական վիճակի, նրանց եւ հարազատների միջեւ կապի հնարավորության մասին:

-Տիկի՛ն Սահակյան, Ադրբեջանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործունեության դադարեցման մասին լուրերը հաստատվեցին: Այժմ ինչպե՞ս է կազմակերպվելու հայ գերիների եւ նրանց ընտանիքների միջեւ կապը:

-Այս պահին առկա է միայն հեռախոսային կապ, որը ապահովում է ադրբեջանական կողմը՝ իր քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների միջոցով: Սակայն նամակագրությունը, փոխանցումները, ինչպես նաեւ հանձնուքներ ուղարկելու հնարավորությունը, որոնք նախկինում իրականացվում էին Կարմիր խաչի միջոցով, լիովին բացառվել են:

Ամենակարեւոր խնդիրը այն է, որ գերիներն այսօր զրկված են արտաքին աշխարհի հետ անմիջական շփումներից: Միջազգային վերահսկողությունը նրանց պայմանների, հոգեբանական վիճակի, հիգիենիկ պայմանների, սննդի եւ այլնի վերաբերյալ ուղղակի բացակայում է. սա մեծ ռիսկեր է ստեղծում: Եթե գերիները խոշտանգվեն կամ բռնության ենթարկվեն, այդ բոլոր դեպքերը կմնան չբացահայտված ու չպատժված:

-Այժմ նրանց առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ չունե՞ք:

-Վերջին ստուգելի տեղեկությունները Վիգեն Էուլջեքջյանի մասին են: Հեռախոսազանգի ընթացքում նա կնոջը հայտնել էր իր ծայրահեղ ծանր վիճակի մասին: Քանի որ խոսակցությունը ձայնագրվել էր, տեղեկատվությունը ստուգելի էր: Նա հայտնել էր, որ զրկված է սննդից, առողջական վիճակը ծանր է, ձեռք է բերել հաշմանդամություն, իսկ համապատասխան պայմաններ կամ անհրաժեշտ սարքավորումներ պարզապես ստեղծված չեն:

-ՄԻԵԴ-ն ամիսներ առաջ որոշում էր կայացրել տեղեկատվության տրամադրման վերաբերյալ: Ի՞նչ փուլում է այս գործընթացը:

-ՄԻԵԴ-ը տեղեկատվություն է պահանջել Ադրբեջանի կառավարությունից՝ թե՛ միջպետական, թե՛ անհատական գործերով: Ադրբեջանը խնդրել է ժամկետի երկարաձգում, դատարանը լրացուցիչ ժամանակ է տվել, որը արդեն սպառվել է: Մինչ այս պահը որեւէ տեղեկություն չենք ստացել եւ սպասում ենք դատարանի նամակագրությանը:

-Ակնկալո՞ւմ եք, որ Ադրբեջանը կներկայացնի այդ տվյալները, թե՞ կրկին կձգձգի գործընթացը:

-Կարծում եմ՝ նրանք կփորձեն որքան հնարավոր է երկար ձգձգել, բայց վերջում, հավանաբար, կտրամադրեն նվազագույն տեղեկատվություն՝ պարզապես ՄԻԵԴ-ի պահանջը ձեւականորեն կատարելու համար: Սակայն փորձը ցույց է տալիս, որ այդ տեղեկությունները հաճախ կեղծված են: Ադրբեջանը կազմակերպում է միայն անունով «զննություններ», որոնցով փորձում է ներկայացնել, թե գերիների առողջական վիճակը նորմալ է, մինչդեռ իրական պատկերը լրիվ այլ է:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԵԿԵՂԵՑԻՆ ԴԱՎԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

Նիկոլ Փաշինյանն ու իր խմբակը մինչ կաթողիկոսին ու Եկեղեցուն մեղադրում են քաղաքականությամբ զբաղվելու մեջ, որոշ ՔՊ-ական ակտիվիստներ մասնավոր զրույցներում կատակում են, թե Փաշինյանի կողմն անցած հոգեւորականները հավակնում են խլել իրենց հացը՝ ավելի թունդ իշխանական քարոզ են անում, քան իրենք, մասնավորապես՝ Հովհաննավանքի կարգալույծ քահանա Ստեփան Ասատրյանը եւ բալթյան երկրների թեմի առաջնորդ Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը: Հատկապես վերջինը կարծես ծպտյալ ՔՊական լինի՝ Նիկոլ Փաշինյանի ու նրա քաղաքական գծի ակտիվ քարոզիչ է դարձել, իշխանական ՋԼՄ-ների նորահայտ աստղ, տաղավարից տաղավար է գնում՝ ՔՊ-ի քարոզչությունն անելով: Նախօրեին անգամ ադրբեջանա-թուրքական քարոզ էր իրականացնում, խանդավառված պատմում, որ վիրահայոց թեմում ծառայության ժամանակ շփվել է թե՛ թուրքերի, թե՛ ադրբեջանցիների, թե՛ այլ իսլամադավան ժողովուրդների ներկայացուցիչների հետ, բայց չի տեսել, որ նրանք պատրաստ են գալ ու կուլ տալ Հայաստանը: Ի դեպ, Վազգեն Միրզախանյանը մեկ ամսից ավելի է՝ Հայաստանում է. անտեր է թողել բալթյան երկրների թեմի առաջնորդի գործը եւ զբաղված է իշխանության պրոպագանդայով: Կան տեղեկություններ, որ նրան առայժմ թույլ չեն տալիս վերադառնալ իր թեմ, քանի որ նա իր վրա է վերցրել տիրադավ եպիսկոպոսների կուրացիան եւ խոստացել է նոր «դավաճաններ» հավաքագրել:

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԻԱՍԹԱՓՎԱԾ Է

Թրամփը չափազանց հիասթափված է թե՛ Ռուսաստանից, թե՛ Ուկրաինայից: Նա հոգնել է հանդիպումներից՝ միայն հանդիպումների համար, նա գործողություններ է ուզում, ասել է Սպիտակ տան մամուլի քարտուղար Քերոլայն Լեւիթը:

Հիշեցնենք, որ վերջին շաբաթների ընթացքում Ուկրաինան, եվրոպական երկրները, Ռուսաստանը եւ ԱՄՆ-ն քննարկում են Ամերիկայի ներկայացրած խաղաղության ծրագիրը, սակայն դեռ վերջնական որոշում չկա:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆՈՒՄ

Թուրքմենստան կատարած աշխատանքային այցի շրջանակում Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն առանձնազրույց է ունեցել Թուրքմենստանի նախագահ Սերդար Բերդիմուհամեդովի հետ:

Ինչպես տեղեկացնում է ՀՀ նախագահի աշխատակազմը, Վահագն Խաչատուրյանը շնորհավորել է իր պաշտոնակցին Թուրքմենստանի մշտական չեզոքության՝ 30-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով շարունակական զարգացում եւ առաջընթաց Թուրքմենստանին, ինչպես նաեւ բարօրություն ու խաղաղություն թուրքմեն ժողովրդին:

Սերդար Բերդիմուհամեդովը նշել է, որ բարձրաստիճան փոխայցելություններն էական խթան են երկու երկրների հարաբերությունների ու համագործակցության ամրապնդման գործում:

ԱԼԻԵՎԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԻ ՍՊԱՍՈՒՄ

Ալիեւի խոսքը այդ համաժողովում հնչեց ավելի արմատական, քան դրա անվանումը: Այն լի էր սպառնալիքներով, ուլտիմատումներով եւ հայ ժողովրդի հասցեին մեղադրանքներով: Ալիեւը կրկին պահանջեց «վերադարձնել» 300 հազար ադրբեջանցիների Հայաստանի տարածք (հիշեցնենք՝ նրանց «իրավունքների» պահպանման համար Հայաստանում ուշադիր կհետեւեն տեղակայված ադրբեջանական հատուկ ծառայությունները, այնպես որ, ադրբեջանցի «վերաբնակիչների» իրավունքները այստեղ ավելի շատ կլինեն, քան հենց հայերի):

Բացի այդ, Ալիեւը հայտարարեց. «Հայաստանը պատմականորեն ոչնչացրել է Արեւմտյան Ադրբեջանում ապրող ադրբեջանցիների հարուստ նյութական եւ ոչ նյութական մշակութային ժառանգությունը, որպեսզի ջնջի ադրբեջանցի ժողովրդի հետքերն իր տարածքից»: Իսկ այժմ, Ալիեւի կարծիքով, եկել է ռեւանշի ժամանակը:

«Ադրբեջանցիների մշակութային ժառանգության վերականգնում» ձեւակերպումը հարմար է նրանով, որ դրա ներքո Բաքուն կարող է ներառել ամեն ինչ՝ տեղանուններ, լեզու, ճարտարապետական հուշարձաններ, նույնիսկ դպրոցական եւ համալսարանական դասագրքերի պատմության տեքստեր: Վստահ եղեք, միայն թողեք նրանց ներս, ադրբեջանցիները այնքան արագ կսկսեն մեզ մոտ ներդնել իրենց «մշակութային ժառանգությունը», որ շուտով մենք չենք ճանաչի Հայաստանը:

Ալիեւը իր խոսքը եզրափակեց հետեւյալ հայտարարությամբ. «Անհրաժեշտ են քայլեր՝ գնահատելու մարդկության դեմ հանցագործությունները, որոնք հայերը կատարել են ադրբեջանցիների դեմ»: Այստեղ աչքի է զարնում նույնիսկ բարեկամություն ձեւացնելու փորձի բացակայությունը: Ալիեւն այլեւս անհրաժեշտ չի համարում աջակցել Փաշինյանի նախընտրական քարոզչությանը այն մասին, թե «խաղաղությունն արդեն հաստատվել է»: Նա զգում է, որ խաղադրույք է կատարել մահացող ձիու վրա եւ մտադիր է որքան հնարավոր է շուտ վերցնել իր շահումը, մինչեւ այդ ձին չի ընկել:

Ալիեւի կողմից մինչեւ ընտրությունները խաղաղ տոնի պահպանումը եւ նրա համաձայնությունը՝ առայժմ չբարձրացնել զգայուն թեմաները, այն է, ինչ Փաշինյանին կենսականորեն անհրաժեշտ է նախընտրական քարոզարշավ կառուցելու համար: Թե բա՝ ես գտել եմ մոտեցում Ալիեւին, եւ երկխոսությունը շարունակելու համար պետք է մնամ իշխանության: Սակայն Ալիեւը բացահայտ հերքում է դա՝ ցույց տալով, որ որեւէ երկխոսություն չկա, եւ իրենք Հայաստանից սպասում են միայն միակողմանի զիջումներ:

Ի՞նչ կարող է անել Փաշինյանը նման իրավիճակում: Ի՞նչ տարբերակներ ունի: Զանգե՞լ Թրամփին, որը չի հիշում մեր երկրի անունը, եւ բողոքե՞լ «վատ» Իլհամից: Ծիծաղելի է:

Փաշինյանին մնում է միայն շարունակել համոզել հայ ժողովրդին, թե իբր նա խաղաղություն է բերել Հայաստան: Գուցե դեռ կան այնպիսիք, ովքեր կհավատան:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԿ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԵՄ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԻՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանը երեկ ընդունել է Եվրոպական միության մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագրի (VLAP) շրջանակում իրականացվող ԵՄ գնահատման առաջին առաքելության պատվիրակներին:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀՀ ներքին գործերի նախարարության եւ ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները:

Արսեն Այվազյանը, ողջունելով հյուրերին, շնորհակալություն է հայտնել հանդիպման նախաձեռնության համար:

Քննչական կոմիտեի նախագահի տեղակալը ԵՄ գնահատման առաջին առաքելության պատվիրակներին է ներկայացրել Քննչական կոմիտեի կառուցվածքը, գործառույթները եւ կարողությունները: Անդրադարձ է կատարվել նաեւ միջազգային համագործակցության շրջանակում կատարված աշխատանքներին, Քննչական կոմիտեի գործունեությանն առնչվող օրենսդրական բարեփոխումներին, ինչպես նաեւ Քննչական կոմիտեի գործունեությանը վերաբերող այլ հարցերի:

ԵՄ գնահատման առաջին առաքելության պատվիրակները կարեւորել են կազմակերպված հանցագործության, ահաբեկչության եւ կոռուպցիայի կանխարգելման ոլորտներում իրականացվող աշխատանքները:

Հանդիպման ավարտին ԵՄ առաքելության փորձագետները շնորհակալություն են հայտնել Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանին՝ իրավապահ ոլորտին առնչվող խնդիրների շուրջ տեղեկատվության փոխանակման համար:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՄ Է

Տնտեսական զարգացման նախարար Մաքսիմ Ռեշետնիկովը մեկնաբանել է Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի արդյունքները ԵԱՏՄ-ն ազատ առեւտրի միասնական գոտի է, որտեղ մասնակից երկրների գործարարները կարող են առեւտուր անել առանց մաքսատուրքերի, առանց խոչընդոտների՝ հիմնվելով փոխադարձ վստահության վրա, այդ թվում կարգավորող մարմինների:

Ռուս նախարարը նշել է, որ փոխադարձ առեւտրի շրջանառությունն ընթացիկ տարում աճել է 8 տոկոսով: Առաջին հերթին խոսքը սննդի մասին է: Օրինակ՝ ձկան առեւտրի աճը կազմել է տասնյակ տոկոս: Միասնական շուկան միության երկրներին թույլ է տալիս զսպել գների աճը՝ բնակչությանը ապահովելով սննդով:

Դա տեղի է ունենում այն պատճառով, որ տեղական շուկաներում ապրանքների դեֆիցիտը վերացվում է հարեւան երկրներից մատակարարումների պատճառով: Սա ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարությունների մշտական աշխատանքի արդյունքն է: Այսօրվա նիստում ամփոփվեցին տարվա արդյունքները: Քննարկվել են նաեւ մինչեւ 2025 թվականը ԵԱՏՄ զարգացման ռազմավարության իրականացման պլանը, մաքսային վարչարարության ընթացակարգերի միասնականացման հետ կապված հարցեր, այդ թվում՝ մաքսային օրենսդրության խախտման համար պատասխանատվության սահմանման միասնական մոտեցումները:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՊԱՏԱՐԱԳԸ՝ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՆՈՐ ՊԱՏԱՐԱԳԻ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Երեկ՝ առավոտյան Նիկոլ Փաշինյանը տեղեկացրեց, որ այս կիրակի՝ դեկտեմբերի 14-ին, Մեծամոր խոշորացված համայնքի Այգեշատ բնակավայրի Սուրբ Գեւորգ եկեղեցում մասնակցելու է պատարագի:

Սուրբ Գեւորգ եկեղեցում հոգեւոր ծառայության կարգված Տեր Մաշտոց քահանա Ստեփանյանը ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ տեղյակ չէ Փաշինյանի այցի վերաբերյալ:

Հարցին՝ ինչպե՞ս է մատուցվելու կիրակնօրյա պատարագը՝ քահանան ասաց, որ ամեն ինչ կլինի հավուր պատշաճի:

Ճշտող հարցին, թե պատարագին զեղչվելո՞ւ է Վեհափառ Հայրապետի անունը՝ քահանան զարմացավ.

-Ինչի՞ համար: Ես տեղյակ չեմ, թե ովքեր են զեղչել Վեհափառի անունը: Ովքեր զեղչել են՝ իրենց հարցրեք: Քաղաքական ենթատեքստեր պարունակող հարցեր ինձ մի՛ տվեք: Ես հոգեւորական եմ եւ իմ ծառայությունը սիրով եմ իրականացնում:

Տեղեկացնենք, որ Տեր Մաշտոցը քահանա է ձեռնադրվել 2024 թվականի նոյեմբերի 24-ին՝ Արթիկի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Նարեկ եպիսկոպոս Ավագյանի ձեռամբ:

Հավելենք նաեւ, որ Տեր Մաշտոց քահանայի որդին՝ Արմեն Ստեփանյանը, զոհվել է 2020 թվականի հոկտեմբերին՝ Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏՈԿԱԵՎԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը հույս է հայտնել, որ Հայաստանն ու Ադրբեջանը հնարավորինս շուտ կստորագրեն խաղաղության պայմանագիրը:

Այս մասին Ղազախստանի նախագահը հայտարարել է Աշգաբաթում անցկացվող «Խաղաղության եւ վստահության միջազգային տարի 2025» համաժողովի ընթացքում:

«Մեր կարծիքով՝ Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից խաղաղության վերաբերյալ համատեղ հռչակագրի ստորագրումը պատմական նշանակություն ունի, ինչը լայն հեռանկարներ է բացում տվյալ տարածաշրջանում եւ դրանից դուրս բազմակողմանի համագործակցության համար: Հույս ունենք, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագիրը կստորագրվի հնարավորինս շուտ»,- հայտարարել է Տոկաեւը:

Ղազախստանի նախագահը նաեւ կարծիք է հայտնել, որ Երեւանի ու Բաքվի միջեւ խաղաղության վերջնական ու ամբողջական պայմանագրի ստորագրումը կերաշխավորի կայունությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Նշենք, որ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը եւս Թուրքմենստանի նախագահի հրավերով աշխատանքային այցով գտնվում է Աշգաբաթում՝ Թուրքմենստանի մշտական չեզոքության 30-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով:

Միացյալ Նահանգների մայրաքաղաք Վաշինգտոնում օգոստոսի 8-ին Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարներ Արարատ Միրզոյանն ու Ջեյհուն Բայրամովը՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ ԱՄՆ ղեկավարների ներկայությամբ նախաստորագրել են «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագիրը, որի դրույթները համաձայնեցվել էին 2025 թվականի մարտին:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Դեկտեմբերի 11-ին Երեւանում կայացել են քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի եւ Նիդերլանդների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի եւ Նիդերլանդների ԱԳ նախարարության քաղաքական հարցերով գլխավոր տնօրեն Մարսել Դե Վինկի գլխավորությամբ:

Մտքեր են փոխանակվել Հայաստան-Նիդերլանդներ Ռազմավարական գործընկերության հռչակագրում ամրագրված ոլորտներում առաջիկա անելիքների շուրջ: Ի թիվս այլ ուղղությունների՝ անդրադարձ է կատարվել հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարում փոխգործակցության հարցերին:

Զրուցակիցները քննարկել են ՀՀ-ԵՄ ռազմավարական գործընկերության օրակարգին առնչվող հարցեր՝ ընգծելով նաեւ այդ համատեքստում երկկողմ համագործակցության խորացման կարեւորությունը:

Վահան Կոստանյանը ներկայացրել է ընթացիկ տարվա օգոստոսի 8-ին Վաշինգտոնյան համաձայնությունների արդյունքներով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղության պայմաններում տարածաշրջանում եւ դրանից անդին տնտեսական փոխգործակցության զարգացման նոր հնարավորությունները:

ՆՈՐ ՓՈՒԼ

Ուկրաինացի եւ ամերիկացի պաշտոնյաներն առցանց քննարկել են անվտանգության երաշխիքների վերաբերյալ փաստաթուղթը:

Այս մասին նշել է Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին X միկրոբլոգի գրառման մեջ:

Զելենսկիի գրառման համաձայն՝ Միացյալ Նահանգները բանակցություններին ներկայացրել են պետքարտուղար Մարկո Ռուբիոն, Պենտագոնի ղեկավար Փիթ Հեգսեթը, ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆը, ԱՄՆ նախագահի փեսան՝ Ջարեդ Քուշները, եւ ամերիկացի գեներալներ: Երկխոսությանը մասնակցել է նաեւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռուտտեն:

«Մենք մեծապես գնահատում ենք ամերիկյան կողմի ակտիվ ներգրավվածությունը բոլոր մակարդակներում՝ ոչ միայն պատերազմը դադարեցնելու, այլեւ Ուկրաինայի անվտանգությունն ապահովելու եւ ռուսական նոր ներխուժումը կանխելու գործում: Սա արտացոլում է Ամերիկայի մտադրությունների լրջությունը եւ արդյունքների հասնելու նրա հստակ կենտրոնացումը»,- նշել է Զելենսկին գրառման մեջ:

Դեկտեմբերի 11-ին Ուկրաինայի նախագահը հայտարարել էր, որ Ուկրաինան Միացյալ Նահանգներից ստացել է անվտանգության երաշխիքների վերաբերյալ փաստաթղթի նախագիծ:

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ԳՅՈՒՂՈՒՄ

ԱՐԱՄՈՒՍԻ ԴԵՊՔԻՑ ԱՆՑԵԼ Է 2 ԱՄԻՍ

2025 թվականի հոկտեմբերի 12-ին Կոտայքի մարզում Թադեւոս Հովակիմյանը 1 օրում 4 անձի սպանեց: Հոկտեմբերի 12-ին նա գնացել է Արամուս գյուղի դաշտ ու սպանել Արմենուհի եւ Գագարին Ղազարյաններին: 61-ամյա Թադեւոսը ամուսիններին սպանելուց հետո իր հանցավոր գործողությունները չէր դադարեցրել: Մինչ իրավապահ համակարգը դեպքի վայրում գործողություններ էր իրականացրել ու փորձում էր հասկանալ՝ ինչ է եղել, ենթադրյալ հանցագործը նույն օրը Կոտայքի մարզի Զովաշեն գյուղի դաշտամիջյան ճանապարհին կրակոցներ էր արձակել Կոտայքի մարզի Զովունի բնակավայրում հաշվառված 46-ամյա Վահե Մարտիրոսյանի եւ Երեւանում հաշվառված 44-ամյա Մարինե Հայրապետյանի ուղղությամբ: Վերջիններս տեղում մահացել էին:

Աղմկահարույց սպանություններից 2 ամիս անց ArmLur.am-ի նկարահանող խումբը Արամուսում է: Սպանված Արմենուհի եւ Գագարին Ղազարյանների քույրերը, եղբայրները, հարազատները ոտքի են կանգնել եւ արդարություն են պահանջում:

Սպանվածի հարազատներին տեղեկություններ են հասել, որ չորս մարդու կյանք խլած Թադեւոս Հովակիմյանը, որն արդեն 15 տարի որսորդական միության անդամ է եւ վերջին տարիներին որսորդական հրացան է ունեցել, անմեղսունակ է ճանաչվել եւ կարող է խուսափել պատասխանատվությունից:

Ինչու՞ Արամուսի դաշտում սպանեցին ամուսիններին, տարիներ առաջվա ի՞նչ խնդիր էին ունեցել հարեւանները:

Սպանված Գագարին Ղազարյանի քույրերը, խնամիները խիստ վրդովված են ու կասկածներ ունեն, թե ինչու կամ ինչպես չորս մարդու կյանք խլած Թադեւոս Հովակիմյանը անմեղսունակ է ճանաչվել ու կարող է խուսափել պատասխանատվությունից:

Գյուղի բնակիչներն ArmLur.am-ին պատմեցին, որ Թադեւոսը որեւէ մեկի հետ չի շփվել, քանի որ մարդիկ վախեցել են, թե իրավապահների ձեռքը կընկնեն:

ArmLur.am-ի նկարահանող խումբը գնաց 4 մարդու սպանության գործով մեղադրվող Թադեւոս Հովակիմյանի տուն, սակայն տան դռները փակ էին:

Մեր նկարահանող խումբը շտապեց 4 անձի սպանության համար մեղադրվողի եղբոր տուն՝ հասկանալու համար՝ արդյոք նա առողջական խնդիրնե՞ր է ունեցել, ո՞ր հիմքով կարող են նրան պատասխանատվությունից ազատել ու, դեռ ավելին, ի՞նչ կապ ունի նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ:

Համայնքում խիստ մտահոգված են, թե ինչու Արամուս գյուղի գյուղապետ Ստեփան Հակոբյանը մի օր չբացեց սպանված ամուսինների տան դուռը եւ այնտեղ միայնակ մնացած որդու որպիսությունից չհետաքրքրվեց. ինչի՞ց է արդյոք կաշկանդված: Սակայն համայնքապետարանում վստահեցրին, թե գյուղապետը տեղում չէ, իսկ հեռախոսը անջատված էր:

Ի վերջո ՀՀ քննչական կոմիտեից փորձեցինք պարզել, թե արդյոք 1 օրում 4 անձի սպանության գործով մեղադրյալ Թադեւոս Հովակիմյանը անմեղսունակ է ճանաչվել եւ արդյոք կարո՞ղ է խուսափել պատասխանատվությունից: Ի պատասխան՝ կոմիտեից հորդորեցին դիմել գրավոր:

Կսպասենք Կոմիտեի պատասխանին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Դեկտեմբերի 12-ին, արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 03:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Հերացու անվան թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխվել 3 քաղաքացի:

Sha2shyan.Ճ�օշ-ի տեղեկություններով, տեղում բժիշկները ոստիկաններին եւ պարեկներին հայտնել են, որ վիրավորները գտնվում են հետազոտման փուլում եւ ի վիճակի չեն կատարվածի մասին բացատրություն տալու:

Մինչ բժիշկները անհրաժեշտ հետազոտություն ու բուժզննում էին իրականացնում, Կենտրոնի ոստիկանները պարզել են, որ տուժածները հիվանդանոց են տեղափոխվել Երեւանում գործող «Կովկաս» պանդոկից:

Ոստիկանները պարզել են, որ վիրավորները Լեհաստանի Հանրապետության քաղաքացիներ 36-ամյա Լուկաս Կ.-ն է, 44-ամյա Լուկաս Բ.-ն եւ 44-ամյա Մաչի Ա.-ն, ովքեր ծեծի են ենթարկվել:

Դեպքի փաստով ոստիկանության Կենտրանական բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական 1-ին բաժին: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ տուժածները ժամանել էին Հայաստան՝ որպես ֆուտբոլի երկրպագուներ:

ԲՆԱԿԻՉԸ ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ՊԱՏՐԱՍՏԵԼ

Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Նալբանդյան գյուղի բնակիչը թմրամիջոց է պահում:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 37-ամյա տղամարդու տան նկուղում հայտնաբերվել է 205 գրամ դեղնականաչավուն կանեփանման զանգված: Պարզվել է, որ նա հայտնաբերվածը պատրաստել է տնամերձ հողամասում աճեցրած կանեփից:

Նալբանդյան գյուղի 37-ամյա բնակիչը ձերբակալվել եւ տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

Կատարվում է նախաքննություն:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատի բաժնի համայնքային ոստիկանների եւ Ոստիկանության գվարդիայի Վաղարշապատի պահպանության բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Էջմիածին քաղաքի 58-ամյա բնակիչը Արա Մանուկյան թաղամասում գործող անիվների սպասարկման կետում իրացնում է առանց համապատասխան դրոշմանիշների եւ QR մատնանշման ծխախոտ:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ նշված հասցեում հայտնաբերվել է առանց համապատասխան դրոշմանիշների եւ QR մատնանշման 830 տուփ տարբեր տեսակի ծխախոտ:

Ապօրինի ձեռնարկատիրության փաստով կատարվում է նախաքննություն:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Հանրապետությունում դեկտեմբերի 11-ից 12-ը բացահայտվել է 129 հանցագործություն, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

34 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,

12 դեպք՝ թմրանյութի հայտնաբերման,

11 դեպք՝ ֆիզիկական ներգործության,

8 դեպք՝ խարդախության,

6-ական դեպք՝ հոգեկան ներգործության, անձնական ունեցվածքի գողության, խուլիգանության,

5 դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու,

3-ական դեպք՝ փաստաթուղթ կեղծելու, սառը զենքի հայտնաբերման,

2-ական դեպք՝ վստահված գույքի հափշտակման, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության, զենք-զինամթերքի առգրավման, ինքնիրավչության:

Բացահայտվել է ավազակության, բնակարանային գողության, կաշառակերության, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, թմրանյութի իրացման, ծառերը, թփերը ապօրինի հատելու, թմրամիջոցի մաքսանենգության, աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության կանոնները խախտելու եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է՝ 2 դեպք՝ անձնական ունեցվածքի գողության, 1 դեպք՝ անձի տիրապետությունից դուրս եկած գույքին տիրանալու:

Հայտնաբերվել է 9 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 2-ը:

Հայտնաբերվել է 1 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 1 դեպք:

ԶԵՆՔ, ԶԻՆԱՄԹԵՐՔ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

ՊԾ Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի 3-րդ վաշտի ծառայողները դեկտեմբերի 11-ի գիշերը՝ ժամը 1:15-ին, Սիլիկյան թաղամասի 4-րդ փողոցում հայտնաբերել, ապօրինի զենք կրելու եւ պահելու կասկածանքով ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին են տեղափոխել 26-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են ատրճանակ եւ փամփուշտներ:

Այս մասին տեղեկանում ենք ՆԳՆ ոստիկանությունից:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸ

Մայիսի 25-ին Տավուշի մարզի դատախազի տեղակալ Հ. Աղասարյանը Իջեւան համայնքի ավագանուն առաջարկություն է ներկայացրել՝ հայց ներկայացրելու վերաբերյալ: Նա ավագանուն հայտնել է, որ 2013թ. սեպտեմբերի 18-ին Իջեւան համայնքի ղեկավար Վարդան Ղալումյանի եւ Իջեւանի բնակիչ Մեխակ Սայադյանի միջեւ կնքվել է Իջեւան քաղաքի Ուսանողական փողոցի թիվ 21 հասցեում գտնվող անշարժ գույքի առուքուվաճառքի պայմանագիր, որի հիման վրա 2013թ. սեպտեմբերի 26-ին անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կատարվել է հիշյալ հասցեում գտնվող 0,1885 հա մակերեսով հողամասի եւ դրա վրա գտնվող 174,7 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ Մեխակ Սայադյանի եւ նրա կնոջ՝ Նարինե Ներսիսյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի գրանցում: Աղասարյանը հայտնել է, որ քաղաքաշինության, տեխնիկական եւ հակահրդեհային անվտանգության տեսչական մարմնից 2025թ. փետրվարի 13-ին ստացված գրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ Մ. Սայադյանին օտարված 100քմ եւ 1285քմ հողամասերը կադաստրային գործում չեն համապատասխանեցվել ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ, 65-րդ եւ 66-րդ հոդվածների պահանջներին, վերահիշյալ հողամասերի օտարումն անհրաժեշտ էր կատարել հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ըստ որի պետության եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը կատարվում է աճուրդով; Բացի այդ, Մեխակ Սայադյանին ընդլայնման կարգով օտարվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող 500 քմ մակերեսով հողամասի չափը գերազանցող, 1285 քմ հողամաս: Հ. Աղասարյանը համայնքի ավագանուն ավագանուն առաջարկել է իր առաջարկությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում պետության (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցել իրավասու դատարան եւ այդ մասին նույն օրը հայտնել Տավուշի մարզի դատախազություն, իսկ հայց չհարուցելու պարագայում նույն ժամկետում այդ մասին տեղեկացնել Տավուշի դատախազությանը: Տավուշի մարզի դատախազի տեղակալը նաեւ տեղեկացրել է, որ մեկամսյա ժամկետում հարուցված հայցի մասին տեղեկատվության բացակայության դեպքում դատախազությունը ձեռնամուխ կլինի «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հիմքով հայց հարուցելու լիազորության իրացմանը: Համայնքի ավագանին մայիսի 30-ին քվեարկությամբ որոշել է համայնքային շահերի պաշտպանության հայցով հանդես չգալ եւ դիմել դատախազություն՝ խնդրելով գործընթացը կազմակերպել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում: Այս հողամասի օտարման գործով հակակոռուպցիոն դատարանում վարույթ է քննվում: Իջեւան համայնքի ղեկավար Վ. Ղալումյանը համարում է, որ նշված հողամասն օրինական է օտարվել, քանի որ Մ. Սայադյանին է օտարվել փաստացի նրա կողմից օգտագործվող տարածքը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»

ՀՈԼԴԻՆԳԸ՝ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» հոլդինգը՝ էֆԵՍ ապահովագրական ընկերության եւ Վարդանանց նորարարական բժշկության կենտրոնի հիմնադիր եւ կառավարող ընկերությունը, հայտարարում է 1 մլրդ ՀՀ դրամ եւ 2.5 մլն ԱՄՆ դոլար ծավալով անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման մասին: Պարտատոմսերի տեղաբաշխողն է Ամերիաբանկը:

Պարտատոմսերի տեղաբաշխումը մեկնարկելու է 2025թ. դեկտեմբերի 15-ին եւ ավարտվելու է 2026 թվականի մարտի 27-ին (կամ ավելի վաղ, եթե ամբողջ ծավալը շուտ վաճառվի): Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000 ՀՀ դրամ կամ 100 ԱՄՆ դոլար է, արժեկտրոնային տարեկան տոկոսադրույքը ՀՀ դրամի դեպքում 11.9% է, ԱՄՆ դոլարի դեպքում՝ 7.9%: Արժեկտրոնների մարման պարբերականությունը կիսամյակային է, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս: Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցների մի մասը «Ինթելլիջենթ Մենեջմենթ» հոլդինգն ուղղելու է «Վարդանանց-Քըրք Քըրքորյան» առողջության եւ երկարակեցության ժամանակակից բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցմանը, իսկ մյուս մասը՝ գործող վարկերի վերաֆինանսավորմանը:

Պարտատոմսերի թողարկման առթիվ ընկերությունից հայտնում են, որ սա առաջին դեպքն է, երբ առողջապահական եւ ֆինանսական բիզնեսները միավորող խումբը մուտք է գործում հայկական կապիտալի շուկա: «Ինթելլիջենթ Մենեջմենթը» ներդրողներին առաջարկում է մասնակցություն իրական, աճող եւ երկարաժամկետ կայուն շուկայում. սա նախաձեռնություն է, որը ձեւավորում է առողջապահության ֆինանսավորման նոր եւ ամուր մոդել՝ աճի մեծ ներուժով:

Հայաստանի բժշկական ոլորտը ցուցադրում է կայուն զարգացում բնակչության աճի, միգրացիոն հոսքերի եւ որակյալ բժշկական ծառայությունների բարձր պահանջարկի շնորհիվ: Լրացուցիչ դինամիկա են ստեղծում ախտորոշման, վիրաբուժության եւ վերականգնողական ուղղությունները՝ բարձր կրկնելիությամբ ծառայությունների շնորհիվ: Նորարարական ապահովագրական պրոդուկտների զարգացումը, մասնավորապես՝ կրիտիկական եւ օնկոլոգիական հիվանդություններից ապահովագրությունը եւ համալիր ավտոապահովագրական ծրագրերը, մեծացնում է պահանջարկը ապահովագրական ծառայությունների նկատմամբ՝ ձեւավորելով սիներգիա ապահովագրության եւ կլինիկական ծառայությունների միջեւ:

Առողջապահության, ապահովագրության եւ ասիստանս ծառայությունները յուրաքանչյուրի համար առավել հասանելի, կառավարելի եւ պարզ դարձնելու նպատակով «Ինթելլիջենթ Մենեջմենթը» միավորել է այս երեք կարեւոր բաղադրիչները մեկ ամբողջական էկոհամակարգի ներքո:

«Մեր ընկերության ռազմավարական զարգացման նոր փուլի շրջանակում մեկնարկել ենք կորպորատիվ պարտատոմսերի թողարկման միջոցով ֆինանսական միջոցների ներգրավումը, որի մի մաս կուղղվի «Վարդանանց-Քըրք Քըրքորյան» նորարարական բժշկության կենտրոնի կառուցմանը: Լիահույս ենք, որ այս նոր նախագծով բուժօգնությունն առավել հասանելի ու որակյալ կդառնա՝ ապահովելով մասնագիտացված աջակցություն առանց հերթերի ու բարդ երթուղիների: Մեր նպատակն է մեր համաքաղաքացիների եւ միջազգային հաճախորդների, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, ԵՄ-ում ու ՌԴ-ում բնակվող մեր ազգակիցների համար ստեղծել բժշկական կենտրոն, որտեղ հարցերի մեծ մասը լուծվում է մեկ այցով, իսկ առողջությունը դադարում է կախված լինել հեռավորությունից եւ ժամանակից»,- նշում է հոլդինգի տնօրեն Արեւշատ Մելիքսեթյանը:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել՝

- առցանց՝ Ամերիաբանկի MyAmeria հավելվածի MyInvest ներդրումային հարթակի միջոցով,
- այցելելով Ամերիաբանկի որեւէ մասնաճյուղ եւ լրացնելով հայտ-հանձնարարականը,
- ուղարկելով լրացված հայտ-հանձնարարականի ձեւն Ամերիաբանկի capitalmarkets@ameriabank.am էլեկտրոնային հասցեին:

Առաջնային տեղաբաշխումից հետո պարտատոմսերը ցուցակվելու են Հայաստանի ֆոնդային բորսայում, ինչից հետո դրանք հնարավոր կլինի ձեռք բերել կամ վաճառել երկրորդային շուկայում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 03/12/2025թ. թիվ 1/447 Ա որոշման համաձայն գրանցվել է «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ պարտատոմսերի ծրագրային ազդագիրը: Պարտատոմսերի ձեռքբերման կարգին, ծրագրային ազդագրի էլեկտրոնային տարբերակին եւ պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարություններին կարելի է ծանոթանալ այստեղ՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով: Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր մանրամասները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ծրագրային ազդագրում:

«Ինթելլիջենթ Մենեջմենթ»-ի մասին

«Ինթելլիջենթ Մենեջմենթ»-ը դիվերսիֆիկացված հոլդինգային ընկերություն է՝ մասնագիտացված առողջապահության եւ ապահովագրության էկոհամակարգերում բարձր ներուժ ունեցող ակտիվներում ներդրումների իրականացման, ակտիվների կառավարման եւ զարգացման մեջ: Հոլդինգն իր էկոհամակարգում համախմբում է «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնը, «էֆԵՍ» ապահովագրական ընկերությունը եւ «Բոնուս Ասիստանս» ասիստանս եւ լոգիստիկ ընկերությունը: «Ինթելլիջենթ Մենեջմենթ»-ն իր 800-ից ավելի փորձառու մասնագետներով ծառայություն է մատուցում տարեկան մոտ 380,000 հաճախորդի՝ գրանցելով 135,000 կարգավորված ապահովագրական հատուցումներ եւ 530,000 իրականացված բժշկական միջամտություններ:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՉԻ՞ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Շատ ափսոս, որ ՀՀ ֆինանսների նախարարը չի տիրապետում ՀՀ գործող սակագնային քաղաքականությանը: Այս մասին ասված է ՀԷՑ Վերահսկողական Կոմիտեի տարածած հայտարարության մեջ:

«Ի գիտություն ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի

Շատ ափսոս, որ ՀՀ ֆինանսների նախարարը չի տիրապետում ՀՀ գործող սակագնային քաղաքականությանը եւ տեղյակ չէ այն փաստի մասին, որ վարկային միջոցների թե՛ մայր գումարը եւ թե՛ տոկոսները վճարում է «ՀԷՑ» ՓԲ ընկերության սեփականատերը իր սեփական միջոցներից, եւ այն որեւէ կերպ չի ազդում եւ չի կարող ազդել ՁԵՐ վճարած հոսանքի արժեքի վրա:

Հորդորում ենք՝ մինչեւ նմանատիպ գրառումներ կատարելը խորհրդակցեք սակագնային քաղաքականությունից տեղյակ մասնագետների հետ:

Ինչ վերաբերում է «ՀԷՑ»ՓԲԸ վարկային պարտավորություններին, 2016 թ. «Տաշիր» ընկերությունների խմբի կողմից ընկերության ձեռքբերման պահին այն արդեն իսկ ուներ կուտակված հսկայական պարտքեր, աշխատում էր մեծ վնասով:

Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետության բնակիչները դեմ չէին լինի, եթե ՀՀ պարտքը, որը հասնում է մոտավորապես 5,4 տրիլիոն ՀՀ դրամի (14 մլրդ ԱՄՆ դոլար) սպասարկեին այն անձինք, ովքեր ներգրավել են այդ միջոցները, եւ ոչ թե ամբողջությամբ վճարեին ՀՀ քաղաքացիները: Ի դեպ, 2025 թ. այս պարտավորությունների սպասարկման համար ՀՀ քաղաքացիները վճարելու են ընդհանուր 390 մլրդ ՀՀ դրամ»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 24 պատահար, 1 մարդ մահացել է, 30-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՀԱՋՈՂՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆՆ Է

Ակբա բանկն իր փորձն է ներկայացրել «Տնօրենների խորհուրդների աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ եւ հնարավորություններ» խորագրով համաժողովին՝ ընդգծելով կորպորատիվ կառավարման առանցքային դերը Հայաստանի տնտեսության զարգացման գործում:

Համաժողովը մեկ հարթակում է միավորել բիզնեսների ղեկավարների, խորհրդի նախագահների, քաղաքականություն մշակողների եւ միջազգային փորձագետների՝ Հայաստանում կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման հնարավորությունները քննարկելու համար:

Ակբա բանկը դեռեւս 2022 թվականին մեկնարկել է կորպորատիվ կառավարման բարեփոխումների լայնածավալ ծրագիր՝ բանկում բարձրացնելով կառավարման որակն ու ամրապնդելով վստահությունը բաժնետերերի եւ ներդրողների շրջանում: Այդ մասին է նաեւ փաստում 2024թ.-ին Զարգացման ֆրանսիական գործակալության խմբի դուստր ընկերություն Պրոպարկոյի՝ Ակբա բանկի 10% բաժնետեր դառնալը:

«Ակբա բանկը կարեւորում է Հայաստանում կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացումը: Մենք համարում ենք, որ դա առանցքային դեր պետք է խաղա տնտեսության զարգացման, ընկերությունների խոշորացման գործում: Գաղտնիք չէ, որ ընկերություններն ունեն կապիտալի միջոցով զարգանալու եւ ռազմավարական գործընկերներ ներգրավելու խնդիր: Միայն վստահությամբ է հնարավոր ներգրավել ռազմավարական գործընկերներ: Իսկ վստահությունն անհնար է առանց կորպորատիվ կառավարման»,- նշել է Ակբա բանկի խորհրդի նախագահ Ռաֆայել Սարգսյանը:

«Ակբա բանկը կառավարման գործընթացում շատ մեծ փորձ ունի, որը կարող է փոխանցել այլ ընկերությունների: Մեր ինստիտուտը հենց այն վայրն է, որտեղ կարող ենք Ակբա բանկի փորձը փոխանցել մյուսներին: Ակբա բանկը շատ ակտիվ աշխատում է ոչ միայն խորհրդի, այլեւ զուգահեռ հանձնախմբերի հետ. կորպորատիվ կառավարման պրոցեսի գունապնակը Ակբա բանկում կա, որից կարողանում ենք նաեւ սովորել»,- նշել է Տնօրենների հայկական ինստիտուտի տնօրեն Արմենուհի Հովակիմյանը:

«Տնօրենների հայկական ինստիտուտը կարեւոր կառույց է կորպորատիվ կառավարման լավագույն փորձին ծանոթանալու, առաջնորդությանը աջակցելու եւ տնօրենների մասնագիտական կարողությունները զարգացնելու համար: Կորպորատիվ կառավարումն ու առաջնորդությունը վճռական կարեւորություն ունեն տնտեսական աճի, զարգացման եւ հասարակությունների բարեկեցության առաջմղման գործում: Հասարակությունն իրական առաջնորդության կարիք է զգում ոչ թե այն ժամանակ, երբ խնդիրները պարզ են եւ լուծումը տեխնիկական, այլ այն ժամանակ, երբ անհրաժեշտ է նոր մտածողություն, նոր մոտեցումներ եւ մարդկանց համախմբելու կարողություն»,- նշել է ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը:

Համաժողովը կազմակերպել է Տնօրենների հայկական ինստիտուտը՝ իր գործունեության 10-ամյակի շրջանակում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» - ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ 100 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

- ԵՆԲ–ն Արդշինբանկին կտրամադրի 100 միլիոն եվրոյի վարկ՝ Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկատիրությունների (ՄՓՄՁ) եւ միջին կապիտալով ընկերությունների ֆինանսավորմանը նպաստելու համար:

- Նախաձեռնությունը նախատեսում է աջակցել շուրջ 300 հայկական ՄՓՄՁ-ների եւ ապահովել ավելի քան 10 000 աշխատատեղ:

- ԵՄ աջակցությունը հնարավորություն է տալիս ֆինանսավորման մի մասը տրամադրելու տեղական արժույթով՝ նվազեցնելով բիզնեսի համար արժութային ռիսկը:

«Արդշինբանկ» ԲԲԸ-ն, Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) եւ Եվրոպական միության բանկը մտնում են համագործակցության նոր փուլ՝ ստորագրելով 100 միլիոն եվրոյի վարկային համաձայնագիր՝ Հայաստանում ՄՓՄՁ-ների եւ միջին կապիտալով ձեռնարկատիրությունների համար ֆինանսական հասանելիությունն ընդլայնելու նպատակով: Այս նշանակալի գործարքը ԵՆԲ-ի եւ Արդշինբանկի միջեւ առաջին ուղղակի գործընկերությունն է եւ նպատակ ունի խթանելու արտադրողական ներդրումները, ամրապնդելու երկարաժամկետ մրցունակությունը եւ աջակցելու աշխատատեղերի ստեղծմանը ամբողջ երկրում:

Այս ծրագրի շրջանակներում Արդշինբանկը Եվրոպական ներդրումային բանկի կողմից աջակցվող վարկային ռեսուրսներ կտրամադրի հայկական ընկերություններին, որոնք ձգտում են արդիականացնել իրենց գործունեությունը, ընդլայնել արտադրական հզորությունները, ներդնել նոր տեխնոլոգիաներ կամ բարձրացնել մրցունակությունը տեղական եւ միջազգային շուկաներում: Բացի այդ, ծրագրի 10%-ը կուղղվի կանաչ վարկավորմանը՝ էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի եւ այլ էկոլոգիապես կայուն ներդրումների աջակցման համար:

Ֆինանսավորման մի մասը կարող է տրամադրվել տեղական արժույթով՝ միկրո, փոքր եւ միջին ձեռնարկատիրություններին արժութային ռիսկերից պաշտպանելու համար: Եվրոպական միությունը աջակցում է ծրագրին դրամաշնորհային ֆինանսավորմամբ, որը կօգնի ապահովել, որ ֆինանսավորումը մնա մատչելի հայկական միկրո, փոքր եւ միջին ձեռնարկատիրությունների համար: Ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ ծրագիրը կաջակցի մոտ 300 ձեռնարկատիրությունների եւ կապահովի ավելի քան 10 000 աշխատատեղ:

Համաձայնագրի ստորագրման արարողությունը կայացավ 2025 թվականի դեկտեմբերի 12-ին Երեւանում՝ Արդշինբանկի վարչության նախագահ Արտակ Անանյանի եւ ԵՆԲ ներկայացուցիչ Մարիոն Հոենիկեի մասնակցությամբ: Միջոցառմանը ԵՄ անունից ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը:

ԵՆԲ փոխնախագահ Թերեզա Չերվինսկան, ով վերահսկում է Բանկի գործունեությունը Հայաստանում, նշել է.

«Յուրաքանչյուր զարգացող տնտեսության հիմքում այն տեղական բիզնեսներն են, որոնք պահպանում են համայնքների հզորությունը եւ ապահովում մարդկանց զբաղվածությունը: Արդշինբանկի հետ մեր համագործակցությունը հնարավորություն է տալիս հայաստանյան ՄՓՄՁ-ներին ստանալ այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ներդրումներ կատարելու, հարմարվելու եւ դիմադրողականություն ամրապնդելու համար: Ես հատկապես ուրախ եմ, որ ֆինանսավորման մի մասը կուղղվի կանաչ փոխակերպմանը՝ հնարավորություն տալով բիզնեսներին պատասխանատու կերպով զարգանալ եւ նպաստել Հայաստանի ավելի կայուն ապագային»:

ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը մեկնաբանել է.

«Հայաստանի տնտեսական ապագան ձեւավորվելու է փոքր բիզնեսների հաստատակամությամբ եւ հեռատեսությամբ: ԵՆԲ-ի եւ Արդշինբանկի հետ մեր համագործակցությունը նպաստում է, որպեսզի հայկական ՄՓՄՁ-ները ստանան այն ֆինանսական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են վստահությամբ զարգանալու, աշխատատեղեր ստեղծելու եւ ներդրումներ կատարելու ավելի կանաչ ու կայուն տեխնոլոգիաներում: Փոքր եւ միջին բիզնեսի ֆինանսավորման հասանելիության բարելավումը՝ որպես հայկական տնտեսության հիմք, ԵՄ-Հայաստան գործընկերության նոր ռազմավարական օրակարգի առանցքային ուղղություններից է»:

Արդշինբանկի վարչության նախագահ Արտակ Անանյանը նշել է.

«Ուրախ ենք զարգացնելու համագործակցությունը ամենահեղինակավոր միջազգային ֆինանսական կառույցներից մեկի հետ, որի արժեքները համահունչ են մեր արժեքներին: Այս միջոցների հաշվին նպատակ ունենք ապահովելու երկարաժամկետ ֆինանսավորում այն բիզնեսների համար, որոնք շարժիչ ուժ են երկրի տնտեսական աճի, նորարարության եւ զբաղվածության համար: Մեր երկու կառույցների համագործակցությունը Հայաստանի համար կարեւոր քայլ է՝ բարձրորակ միջազգային ֆինանսավորմանը հասանելիության ընդլայնման եւ ՄՓՄՁ-ներին ու միջին կապիտալով ընկերություններին զարգացման, արդիականացման եւ գլոբալ մակարդակով մրցակցության համար անհրաժեշտ կայուն ռեսուրսներով ապահովելու ուղղությամբ: Վստահ եմ, որ միասին մենք կնպաստենք Հայաստանի ավելի ուժեղ եւ բարեկեցիկ ապագայի կառուցմանը»:

Եվրոպական ներդրումային բանկի մասին

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) Եվրոպական միության երկարաժամկետ վարկավորող հաստատությունն է, որը պատկանում է ԵՄ անդամ պետություններին: Ութ հիմնական առաջնահերթությունների շրջանակում ԵՆԲ-ն ֆինանսավորում է այնպիսի ներդրումներ, որոնք նպաստում են ԵՄ քաղաքականության նպատակներին՝ խթանելով կլիմայի փոփոխության դեմ գործողությունները եւ բնապահպանությունը, թվայնացումը եւ տեխնոլոգիական նորարարությունը, անվտանգությունն ու պաշտպանությունը, համախմբվածությունը, գյուղատնտեսությունը եւ կենսատնտեսությունը, սոցիալական ենթակառուցվածքները, կապիտալի շուկաների միությունը եւ ավելի ուժեղ Եվրոպան՝ ավելի խաղաղ եւ բարգավաճ աշխարհում:

ԵՆԲ խումբը, որի կազմում է նաեւ Եվրոպական ներդրումային հիմնադրամը, 2024 թվականին ստորագրել է մոտ 89 միլիարդ եվրոյի նոր ֆինանսավորում ավելի քան 900 բարձր ազդեցություն ունեցող նախագծերի համար՝ խթանելով Եվրոպայի մրցունակությունն ու անվտանգությունը:

ԵՆԲ խմբի կողմից ֆինանսավորվող բոլոր նախագծերը համապատասխանում են Փարիզի կլիմայական համաձայնագրին՝ համաձայն ԵՆԲ «Բանկի կլիմայական ճանապարհային քարտեզի»: ԵՆԲ խմբի տարեկան ֆինանսավորման գրեթե 60%-ը ուղղվում է նախագծերի, որոնք նպաստում են կլիմայի փոփոխության մեղմացմանը, հարմարվողականությանը եւ առողջ շրջակա միջավայրի ապահովմանը:

Շուկայի ինտեգրումը խթանելով եւ ներդրումները մոբիլիզացնելով՝ խումբը աջակցել է ռեկորդային ավելի քան 100 միլիարդ եվրոյի նոր ներդրումների՝ 2024 թվականին Եվրոպայի էներգետիկ անվտանգության համար, եւ 110 միլիարդ եվրո աճի կապիտալ է տրամադրել ստարտափների, աճող ընկերությունների եւ եվրոպական առաջամարտիկների համար: Եվրոպական միության ներսում ԵՆԲ-ի ֆինանսավորման մոտ կեսն ուղղվում է համախմբման տարածքներ, որտեղ մեկ շնչի եկամուտը ցածր է ԵՄ միջինից:

ԵՆԲ գլխավոր գրասենյակի բարձրորակ, թարմացված լուսանկարները լրատվամիջոցների համար հասանելի են այստեղ:

Արդշինբանկի մասին

Արդշինբանկը Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: Արդշինբանկն ունի շուրջ 570,000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 2,300-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 72 մասնաճյուղերով:

Արդշինբանկը Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitձh (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՅՍՕՐ ՀԱԿՈԲ ԿՈՉՈՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 142-ՐԴ ԱՄՅԱԿՆ Է

Այսօր՝ դեկտեմբերի 13-ին, հայ գեղանկարչության կարեւոր դեմքերից մեկի՝ Հակոբ Կոչոյանի ծննդյան 142-րդ տարին է լրանում: Ախալցխայում՝ ոսկերչի ընտանիքում ծնված Կոչոյանը իր առաջին գեղարվեստական զգացողությունները հենց այս միջավայրում է ձեռք բերել: 1900-ին ավարտելով Վլադիկավկազի քաղաքային վարժարանը՝ նա մեկնեց Մոսկվա, որտեղ սովորեց Պրուսովի արվեստանոցում եւ յուրացրեց փորագրության ձեւավարումը: Շարունակելով կրթությունը՝ 1905–1907 թթ. նա ուսանեց Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում, հետո տեղափոխվեց Փարիզ՝ մասնագիտական հմտությունները խորացնելու համար:



Կոչոյանն իսկապես ունեցավ մասնագիտական փայլուն ու հետաքրքիր կյանք: 1918-ին Կոչոյանը հաստատվեց Հայաստանում եւ նույն տարում միացավ Նիկողայոս Մառի հնագիտական արշավախմբին՝ մասնակցելով Անիի պեղումներին: Անիում տեսածը խոր ազդեցություն թողեց նրա վրա, եւ այդ տպավորությունների արտահայտություններից մեկը դարձավ «Անիի ավերակները» (1919) աշխատանքը: 1918-1920 թթ. նա շարունակ մասնակցեց Անիի հնագիտական խմբի աշխատանքներին՝ ամրապնդելով պատմական միջավայրի եւ արվեստի իր ներքին կապը:

Կոչոյանի արվեստին բնորոշ են նուրբ գեղարվեստական լուծումները, մաքուր գծագրական մտածողությունը եւ ինքնատիպ ոճը, որը, առանց կրկնօրինակելու միջնադարյան զարդարվեստը, այն վերաիմաստավորում էր ժամանակակից պահանջների շրջանակում: Նա կարողացավ հայկական գրաֆիկան ներկայացնել նոր շնչով՝ միաժամանակ պահպանելով ազգային անբնականորեն չընդգծված, բայց մշտապես զգալի ներկայությունը:

Հակոբ Կոչոյանի համար արվեստ ստեղծելը շարունակություն էր՝ անցյալից դեպի ներկա: Կոչոյանը չէր սահմանափակվում մեկ ոլորտով. գրաֆիկայի պարզությունը եւ գունանկարչության հավասարակշռությունը նրա ստեղծագործություններում հանդես էին գալիս որպես նույն մտածողության տարբեր արտահայտություններ:

1920-ականներին Կոչոյանը ստեղծեց իր հայտնի «Սասունցի Դավիթ» գրաֆիկական աշխատանքը, որը դարձավ նրա ամենաճանաչված գործերից մեկը: Գրքային գրաֆիկայի ոլորտում նա շարունակեց ակտիվ ստեղծագործել՝ պատկերազարդելով ինչպես ժողովրդական հեքիաթներ, այնպես էլ ժամանակակից գրականություն: Տարբեր տարիներին նրա ձեռքով ձեւավորվեցին Ստեփան Զորյանի «Հազարան բլբուլը», Հովհաննես Թումանյանի «Գիքորը» եւ «Տերն ու ծառան», Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին», Ակսել Բակունցի «Սեւ ցելերի սերմնացանը», Մաքսիմ Գորկու «Բանաստեղծություններ եւ լեգենդներ» եւ այլ հրատարակություններ:

1934-ին նրա աշխատանքները ներկայացվեցին Մոսկվայում՝ խորհրդային գրողների առաջին համագումարի ցուցահանդեսում, ինչը նրան բերեց լայն ճանաչում: Հետագայում դրանք ցուցադրվեցին Լոնդոնում, Ֆիլադելֆիայում, Դանցիգում եւ այլ քաղաքներում:

Այսօր Կոչոյանի ստեղծագործությունները պահպանվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Սանկտ Պետերբուրգի Ռուսական թանգարանում, Մոսկվայի Արեւելքի ժողովուրդների արվեստի թանգարանում, Կիեւի Ռուսական արվեստի թանգարանում, ինչպես նաեւ Երեւանում գործող տուն-թանգարանում, որը բացվել է 1973 թվականին: Նրա գործերը շարունակում են հետաքրքրել եւ ներշնչել արվեստասերներին՝ պահպանելով այն յուրահատուկ լեզուն, որը միաժամանակ պարզ է եւ համահունչ՝ օժտված յուրահատուկ շքեղությամբ:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

Լ.ԱՐՈՆՅԱՆԸ ՀԱՂԹԵԼ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՎԱՐԿԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ՄԱԳՆՈՒՍ ԿԱՐԼՍԵՆԻՆ

Լեւոն Արոնյանը դարձավ «Freestyle Chess Grand Slam Final» Ֆիշերի արագ շախմատի մրցաշարի հաղթող, հայտնում են Հայաստանի շախմատի ֆեդերացիայից:

Եզրափակչում Արոնյանը 1.5:0.5 հաշվով հաղթել է աշխարհում ամենաբարձր վարկանիշ ունեցող Մագնուս Կարլսենին:

ՄԵՍՍԻՆ ԿՄԱՍՆԱԿՑԻ ԻՐ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

«Ինտեր Մայամիի» եւ Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսսին Հնդկաստանում կբացի իր արձանը:

38-ամյա ֆուտբոլիստը Հնդկաստանում կլինի եռօրյա այցով: Մի շարք միջոցառումներ կանցկացվեն Կալկաթայում, Հայդարաբադում, Մումբայում եւ Դելիում: Նրան կմիանան Լուիս Սուարեսը եւ Ռոդրիգո Դե Պոլը:

Կալկաթայում Մեսսին կբացի իր արձանը: Հուշարձանն ունի ավելի քան 21 մետր բարձրություն: Երկրպագուները կկարողանան այցելել նաեւ արգենտինացու երկրպագուների գոտի, որտեղ տեղադրված է ֆուտբոլիստի՝ գահին նստած, բնական չափերի քանդակը: Սենյակը զարդարված է նրա գավաթների կրկնօրինակներով:

ՌՈՒԴՈԼՖ ԳԱՐԲՈՅԱՆԸ՝ 4-ՐԴ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Դուբայում ընթացող բռնցքամարտի աշխարհի առաջնությունում Ռուդոլֆ Գարբոյանը (51կգ) դարձավ Հայաստանի հավաքականի 4-րդ բրոնզե մեդալակիրը:

Կիսաեզրափակչում 23-ամյա բռնցքամարտիկը պարտվեց կրկնակի Օլիմպիական չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր Խասանբոյ Դուսմատովին (Ուզբեկստան):

Գարբոյանը կարիերայում առաջին անգամ նվաճեց աշխարհի առաջնության բրոնզե մեդալը:

Հայաստանի ներկայացուցիչներից այսօր ուշ երեկոյան եզրափակչի ուղեգրի համար կպայքարի գերծանրքաշային Դավիթ Չալոյանը:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ Է ԳԼՈԲԲԻՆԳԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ

Դեկտեմբերի 12-ին Կոնվերս Բանկը սկսել է Գլոբբինգի պարտատոմսերի տեղաբաշխումը: Մինչեւ 2026թ. փետրվարի 12-ը նախատեսվում է տեղաբաշխել ՀՀ դրամով եւ ԱՄՆ դոլարով պարտատոմսեր հետեւյալ պայմաններով.

ՀՀ դրամով պարտատոմսեր.

- Ծավալ՝ 1,5 մլրդ ՀՀ դրամ
- Արժեկտրոնային եկամտաբերություն՝ 12%
- Շրջանառման ժամկետ՝ 36 ամիս
- Արժեկտրոնների վճարման պարբերականություն՝ կիսամյակային

ԱՄՆ դոլարով պարտատոմսեր

- Ծավալ՝ 2 մլն ԱՄՆ դոլար
- Արժեկտրոնային եկամտաբերություն՝ 8,25%
- Շրջանառման ժամկետ՝ 36 ամիս
- Արժեկտրոնների վճարման պարբերականություն՝ կիսամյակային

Պարտատոմսեր կարող եք ձեռք բերել.

- Converse Mobile հավելվածում
- Կոնվերս Բանկի մասնաճյուղերում

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը կներկայացվեն Հայաստանի ֆոնդային բորսա ցուցակման համար:Պարտատոմսերի Ծրագրային ազդագրին եւ Թողարկման վերջնական պայմաններին կարող եք ծանոթանալ այստեղ, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՄԻՆԵՍՈԹԱՅՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է 400 ՄԱՐԴ

ԱՄՆ ներգաղթի եւ մաքսային ծառայությունը (ICE) Մինեսոթայում անօրինական ներգաղթյալներին ձերբակալելու լայնածավալ գործողության ընթացքում բռնել է ավելի քան 400 մարդու: Այս մասին տեղեկացրել է NBC News հեռուստաալիքը՝ հղում կատարելով գերատեսչության աղբյուրին:

Մինեապոլիս-Սեն Փոլ ագլոմերացիայում, որտեղ գտնվում է աշխարհի ամենամեծ սոմալիական համայնքը, գործողությունը շարունակվում է դեկտեմբերի սկզբից: Այն ներառում է երկրի տարբեր ծայրերից ժամանած մոտ 100 ICE գործակալ, ինչպես նաեւ այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Ծառայության ներկայացուցիչ Մարկոս Չարլզը NBC News հեռուստաալիքին ասել է, որ գործողությունը «չի ուղղված սոմալիացիների» դեմ եւ որ դաշնային ուժերը «փնտրում են տարածքում անօրինական գտնվող մարդկանց»: Չարլզը ավելացրել է, որ գործողությունը բարդանում է չափազանց ցուրտ եղանակի պատճառով, ներգաղթյալները «շատ հաճախ դուրս չեն գալիս իրենց տներից»: Հեռուստալիքի տվյալներով՝ տեղի բնակիչները բողոքում են անվտանգության ուժերի տեղակայման դեմ եւ սպառնալիքներ են հնչեցնում նրանց հասցեին:

Ինչպես դեկտեմբերի 3-ին հաղորդել է The New York Times-ը, դաշնային ուժերը մտադիր են նույնականացնել եւ ձերբակալել այն սոմալիացիներին, ովքեր ստացել են արտաքսման ծանուցումներ, բայց դեռեւս բնակվում են քաղաքում: Բացի այդ, անվտանգության ուժերը նախատեսում են ձերբակալել այն ներգաղթյալներին, որոնք դեռեւս չեն ստացել անհրաժեշտ փաստաթղթերը:

● *Դեկտեմբերի 14-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Խրտվիլակը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ. ցանկացած մարդ, ով հավատում է, կարո՞ղ է քարոզել եւ տարածել Աստծո խոսքը, թեեւ գիտեմ, որ դրա համար երկար տարիներ ուսում են ստանում եւ ձեռնադրվում մեր եկեղեցու քահանաները:

Համլետ Պետրոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Յուրաքանչյուր մարդ կարող է Աստծո խոսքը տարածել, բայց ոչ հռչակել իրեն միակ եւ ճիշտ քարոզիչ եւ ճշմարտություն ուսուցանող հոգեւոր հովիվ: Կարելի է բարեկամներին, հարեւաններին բացատրել քրիստոնեական ճշմարտությունը, որով եւ կատարվում է սրբազան պարտականություն: Այսօր հովիվ եւ քարոզիչ դառնալը միայն հոգու կանչով չպետք է սահմանափակվի: Քանի որ այս դարը ինֆորմացիայի դար է, ապա քարոզիչը պետք է հսկայական ինֆորմացիայի տիրապետի, որպեսզի ոչ միայն կարողանա Աստծո խոսքը փոխանցել, այլեւ այդ խոսքը մատչելի դարձնել ցանկացած խավի եւ ցանկացած մասնագիտության տեր մարդու: Իսկ դրա համար տարիներ են պետք, որպեսզի անհատից հզոր քարոզիչ ձեւավորվի:

Ուստի, քարոզիչը ոչ միայն հավատացյալ անձ պետք է լինի, այլ նաեւ համապատասխան կրթություն ստացած անհատ, որպիսիք են այսօր Հայ եկեղեցու հոգեւոր սպասավորները: Սա չի նշանակում, որ եթե մեկը ցանկություն ունենա Հայ եկեղեցու վարդապետությունն իր մտերիմին կամ բարեկամին հասցնել, չունի դրա իրավունքը: Նա կարող է այդ մարդուն եկեղեցի բերել, ծանոթացնել հոգեւոր հովվի հետ՝ հորդորելով մշտապես հոգեւոր խորհուրդներ ստանալ: Սա նույնպես ծառայություն է Աստծուն:

Օրհնությամբ՝ Տ. Շմավոն քահանա Ղեւոնդյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Չնայած ներկայացված պատասխանին՝ փաստ է, որ յուրաքանչյուրն իրավունք ունի Աստծու խոսքը լսելի դարձնել հանրությանը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ կարգով է փոխվում կենսաթոշակի տեսակը:

Գայանե Բարսեղյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակի տեսակը փոխվում է կենսաթոշակառուի դիմելու դեպքում՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից: Կենսաթոշակի տեսակը փոխվում է, եթե կենսաթոշակառուն ունի կենսաթոշակի այն տեսակի իրավունքը, որի համար դիմել է:

Արտոնյալ պայմաններով, մասնակի կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից նրա կենսաթոշակի տեսակը փոխվում է տարիքային աշխատանքային կենսաթոշակի՝ անկախ կենսաթոշակառուի դիմելուց:

Տարիքային աշխատանքային կենսաթոշակը արտոնյալ պայմաններով, մասնակի կամ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակի փոխվել չի կարող:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի չափը ընտանիքի՝ այդ կենսաթոշակի իրավունքն ունեցող անդամներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է հետեւյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափին գումարվում է մահացած կերակրողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկվանից համացանցում ակտիվորեն քննարկվում է Պարույր Սեւակի նորաբաց արձանը: Քանդակը բազմաթիվ քննադատությունների արժանացավ. հիմնականում մարդիկ դժգոհում էին, որ Սեւակի կերպարը ոչ պրոֆեսիոնալ ու կոպիտ է ստացվել, ինչի հետ, ազնիվ լինենք, անհնար է չհամաձայնել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 5 - 10 + 3 + 7
	Կոտայքի լեռներ	- 5 - 9 + 2 + 5
	Կոտայքի նախալեռներ	- 1 - 4 + 7 + 9
	Գեղարքունիք	- 5 - 10 + 2 + 5
	Լոռի	- 4 - 9 + 6 + 10
	Տավուշ	- 2 + 1 + 8 + 12
	Արագածոտնի լեռներ	- 5 - 10 + 2 + 5
	Արագածոտնի նախալեռներ	- 1 - 4 + 5 + 10

	Արարատ	- 1 - 4 + 7 + 10
	Արմավիր	- 3 - 6 + 7 + 9
	Վայոց ձորի լեռներ	- 5 - 9 + 2 + 5
	Վայոց ձորի նախալեռներ	- 1 - 5 + 7 + 10
	Սյունիքի նախալեռներ	- 4 - 9 + 5 + 9
	Սյունիքի հովիտներ	- 3 + 2 +10 + 14
	ԼՂՀ	- 3 + 3 + 9 + 12
	Երեւան	+ 1 + 2 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*